ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4647-Ա « 17» նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԳՐ.ԲԱՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.141 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ, 39-րդ կետերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2025 թվականի նոյեմբերի 7-ի N 450 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 13-ի հ. 62033-25 գրությունը՝

1. Տաթևիկ Արթուրի Հովհաննիսյանին՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ից՝ 1 տարի փորձաշրջանով, նշանակել «Երևանի Գր.Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ից մինչև 2030 թվականի նոյեմբերի 19-ը ներառյալ:

2. «Երևանի Գր. Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տաթևիկ Հովհաննիսյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Երևանի Մովսես Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Կոստանյանին:

3. «Երևանի Գր. Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի

տեղակալ Նարինե Բալասբեկյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ